



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Տարգմար

Գործ:

Լեռ

1307

1999

Մ Ա Ր Յ Ա Ր




Գ Ո Ղ Ը

(ԶԻՆԻՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՑ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԾԻԱԾԱՆ»-Ի

№ 2.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵԿՏՐԱԶԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՅԻ. ՊՕԼԻՑ. 7.

1910




Ի հիշատակ անկեղծ շարժումների՝ Ա. Լեփեզ

ՄԱՐԴԱՐ — 1910

ԳՈՂԸ

(Զինտրի յիշատակարանից)



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵԿՏՐԱԶԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՅԻ. ՊՈԼԻՑ. 7.


1910

Հր. Աս. Կանկանեանի լիստակին յաշկացած գումարով

2052.

28 1310

41307-62



Գ Ո Ղ Ը

(Զինուորի յիշատակարանից)



I

Բոլորս սարսափեցինք, երբ աչքներս
դիպաւ նրա ալլազունած դէմքին...: Կա-
պիտան Ֆօմինը՝ մեր զօրանոցի աւագ
սպան, համարեա միշտ մռայլ էր. ոչ ոք
չէր կարող պնդել, թէ ինքը երբ և է տեսել
էր նրան ժպտալիս: Միջահասակ, թխադէմ,
սև ու երկար մազերով՝ երբ յանկարծ նա ե-
րևում էր զօրանոցի շէմքին, և նրան առա-
ջին տեսնող զինւորը ամբողջ ուժով գոռում
էր „Смир...но!..“ (հանգիստ), մենքբազէիսրարշաւ
ստուերից սարսափած ճնճղուկի նման վեր
էինք թռչում տեղներիցս. և երբ շէմքի մօտ
ֆելդֆեբելը *) անշարժ արձանի նման ցցւում

*) Ֆելդֆեբելը զօրանոցի ամբիջական հսկող իշխանա-
ւորն է. նա համարւում է ստորին ծառայող (нижний чинъ),
բայց հասարակ զինւորներից ամենաբարձրն է աստիճանով:
Առհասարակ այս պաշտօնը կատարում են այն զինւորները,
որոնք պարտադիր ծառայութիւնը վերջացնելուց յետոյ
մնում են կամովին ծառայելու:

էր նրա առաջ կրօնականները միմեանց սեղմած, ու աջ ձեռքը ամբողջովին ձգած ճակատին դնելով զեկուցում էր տալիս, մենք ինչպէս ցաք ու ցրիւ սիւններ գամուում էինք տեղւերումս և աչքերնիս անթարթ նրա երեսին ձգում: Ո՛չ մի ձայն, ո՛չ մի շարժում. միայն ֆելդֆեբելի շրթունքներն արագ բախում էին միմեանց, և բառերն հոսում էին այնպէս արագ ու համաշափ, ինչպէս ոտանաւորի տողերը՝ անգիր ասող աշակերտի շրթունքներից: Կապիտանը նոյնպէս անշարժ, ձեռքը աջ կողմից ճակատին մեխած, նայում էր շեշտակի այդ մեքենայի նման արագ շարժող շրթունքներին: Ապա ֆելդֆեբելը արագութեամբ ծռում էր և, մի քայլ յետ գնալով, ճանապարհ էր տալիս նրան: Այդ ժամանակ կապիտանը առաջ էր գալիս և գլուխը ուղիղ պահած, աջ ու ձախ հայեացք ձգելով, բարձրաձայն ասում էր.

—Здорово братцы!.. (Բարև, եղբայրներ).
Հնդկահաւերի խմբի նման, որոնց վրայ յանկարծ քար ես շարտում, վզներս երկարացնելով և ձայներս միմեանց յարմարեցնելով, աղաղակում էինք մենք.

—Здравія желаемъ, ваш...сок...род (вашему высокоблагородію — ամողջութիւն ենք ցանկանում . ձերդ բարձր բարեծննդութեանը):
Ապա նա անցնում էր զօրանոցի այս գլխից այն գլուխը, խոժոռ աչքերը դարձնելով

մի մահճակալից միւսի վրայ և դառնալով մեզ, բարձր ու խռպոտ բասով հրամայում էր. „На занятие“ (զբաղմունքի), կամ ցած ու կարծես ակամայ հնչող ձայնով ասում, „Вольно!“ (ազատ): Այն օրը երբ լսում էինք այս վերջին բառը, ազատ շունչ էինք քաշում, գուշակելով, որ նրա տրամադրութիւնը լաւ է և մեզ շատ չէ չարչարելու: Իսկ երբ անմիջապէս հրամայում էր հագնուել և հրացանները վերցնել, այդ նշան էր, որ նա բարկացած է. այդպիսի օրերում նրա սև դիմագծերում մի տեսակ կարմրութիւն էր նկատուում. և այդպիսի օրերում մենք շատ քրտինք էինք թափում, հրացանն ուսներին վազելով: Իսկ այդ օրերը յաճախ էին և անհամեմատ աւելի շատ, քան այնպիսիները, երբ նրա տրամադրութիւնը լաւ էր լինում:

Բայց այդ օրը նրա դէմքից չէ թէ բարկութիւն, այլ սարսափ, քարացնող սարսափ էր ցայտում: Մենք պարզ նկատեցինք, թէ ինչպէս մինչև անգամ Փելզֆելբերի ծնկները զեկուցում տալու ժամանակ, որոնք այդպիսի դէպքերում ուղիղ ու հաստատուն սիւնների նման անշարժ էին լինում, այս անգամ կարծես տատանուեցին. իսկ ձեռքը ճակատին դրած՝ դողդողաց, և նա բառերն արտասանելիս աչքերը մի քանի անգամ թարթեց ու թուրք կուլ տուեց:

Սրանք նշաններ էին, որոնք գուշակում էին

մեզ համար մի մեծ փոթորիկ. սակայն նրա հաւաքուած կնճիռների մէջ այս անգամ սովորական կարմրութիւնը չէր նկատուում. ընդհակառակը նրանք դողդողում էին, և այնտեղից մի մահաբեր գունատութիւն էր արտացոլում:

— Դուք բեր բոլորին հագնուած—հրամայեց նա բարկութիւնից դողացող ձայնով ֆելդֆերելին և ինքը զօրանոցից դուրս եկաւ:

— Հագնուեցէք շուտով—որոտաց ֆելդֆերելի ուժգին ձայնը և թնդաց զօրանոցի գերեզմանային լուծեան մէջ. կարծես Գաբրիէլեան փողի հնչիւնն էր, որ մեր ականջներին դիպչելով, գլխից մինչև ոտք ցնցեց մեզ:

Մենք էլ չիմացանք թէ որքան ժամանակ տևեց մեր հագնուելը. մէկ-թէ երկու րոպէից փամփուշտամանները գօտիներիս կապած, շինեղները ձախ ուսներիս խամուտի սլէս անցկացրած, հրացանը ձեռներիս՝ իջանք բակը:

Մզլած, գորշ երկինք: Աշնանային բարակ, շատ նօսր անձրև էր մաղում: Գետինը բոլորովին խոնավ՝ գետ չէր թրջուել: Տխուր երկինքը կապիտանի գայրալից գէմքի հետ մեր կրծքից մի խոր հառաչ դուրս քաշեց, որը մենք սակայն չկարողացանք արտայայտել. շրթունքներըս կրծում էինք, որ արգելենք մեր հազը կամ հեոցի բարձր ձայնը:

Ինչպէս ուումքի շուրջը շղթայուած մարդիկ, որոնք պատրոյգի այրուելը դիտում են

սարսափից քարացած գէմքով, մենք լուռ, անշարժ շարուեցինք, երեսներս դարձրած դէպի կապիտանը, և յուսահատ փութկոտութեամբ սպասում էինք նրա պայթելուն. և նա պայթեց որոտագին ձայնով, որի ելեջները ումբի փշրանքների նման տարածուեցին մեր վրայ, և մենք գիտակցութիւննիս կորցրած, աչքներս միջնած, փշաքաղուեցինք ամբողջ մարմնով:

— Կանգնեցէք... ուղի... ի... դ...:

Ինչպէս մի մարմին, երկարած և կանգնած էինք մենք անշարժ:

— На-пра́во!, լսուեց երկրորդ հրամանը. մենք շրջուեցինք դէպի աջ, և գիտակցութիւնը վրաներս եկաւ:

— Бё...гомъ, маршъ!..., որոտացնորից ձայնը, և մենք սկսեցինք վազել— անընդհատ, արագ, յետ ու առաջ: Հրացաններն ուսներիս ճօճուում էին, աջ ձեռքերնիս արագութեամբ գօտկատելի վրայ յետ ու առաջ էին գնում-զալիս, և մենք վազում էինք:

— Հրացաններն ուղիղ պահեցէք:... մէկ— երկու, մէկ— երկու... գլուխներդ բարձր...— մեր ոտքերի համաչափ թխկթխկոցի հետ երբեմն որոտում էր նրա ձայնը, յորդ կարկուտի հետ որոտացող շարագուշակ ամպի գոռոցի նման: Եւ մենք վազում էինք շնչասպառ... մինչև ցանկապատ, որտեղ լսուում էր նրա անհրեկող ձայնը՝

—Круг...о́мъ...маршъ! և մենք՝ որսորդից փախ-
չող եղջերուի պէս, որի առաջ յանկարծ անդունդ
է բացւում, աչքերնիս մթնած, անգիտակցօրէն
շրջւում էինք կրունկներէս վրայ դէպի յետ և
վազում մինչև զօրանոցի բարձր պարիսպը՝ հե-
ւալով, անընդհատ, համաչափ...:

Ոչ մի անգամ մենք այդչափ չէինք վազել:
Անձրեն յորդանում էր. գետինը ծածկուեց ցե-
խով, որի մէջ ճրփճփում էին մեր երկարավիզ
կօշիկները: Անձրևի կաթիլները արագութեամբ
խփւում էին երեսներէս, որոնց հետ խառնուե-
լով քրտինքը, առուի նման ցած էր հոսում:
Մենք սակայն զրկուած էինք իրաւունքից և
հնարաւորութիւնից՝ քրտինքներս սրբելու: Յոգ-
նել էինք մինչև ոսկորներէս ծուծը, թրջուել
էինք ամբողջ մարմնով—շորերի վրայից և տա-
կից: Գոլորշին սպիտակ շղարշի նման գլուխ-
ներիցս վեր էր բարձրանում, ինչպէս մառա-
խողը խոնաւ երկրի մակերևոյթից գարնան
արևի ճառագայթների տակ: Ոչ ոք սակայն չէր
մտածում կանգնելու մասին: Շատերը սայ-
թաբում, վայր էին ընկնում, բայց այդ էլ չէր
օգնում. գազազած կապիտանի սպառնալից
հայեացքը ընկնողին իսկոյն ոտքի էր հանում,
և նա շարունակում էր վազել...:

Իմ աչքերն յանկարծ փակուեցին, առաջս
մթնեց, ծնկներս դողդողացին, հրացանի կոթը
ձեռքիցս բիչ էր մնում դուրս պրծնի. կարծես

երազի մէջ լինէի և յանկարծ լսեցի շատ պարզ,
բարձր՝ իմ ազգանունը.

— Ակոպով...

Մի դող անցաւ մարմնովս և ինձ սթափեցրեց. հրացանս ուղղեցի, կոթը սեղմեցի ձեռքիս մէջ և շարունակեցի հեծն վազել, երբ նորից հնչեց ձայնը— Ակոպով...: Քայլերս մեծացրի և ինձ այլևս չհնազանդուող ոտքերիս ոյժ տուի. բայց նորից լսեցի իմ ազգանունը, և այս անգամ ֆելդֆերեյն էր խօսողը.

— Ակոպով, չէ՞ք լսում, ի՞նչ է:

Ես յետ նայեցի դողալով:

— Դուք եկ շարքից, հրամայեց կապիտանը: Ես չհասկացայ թէ ինչ էր կատարւում. դուք եկայ, մօտեցայ նրան, և նա ձայնը ցածրացնելով ասաց.

— Ազատ ես, գնա՛ գօրանոց...:

Անբացատրելի էր ինձ համար այս. ձգուեցի, երկարացայ բթածայրերիս վրայ, գլուխս կռնացրի, ուզում էի... չգիտեմ ինչ ասել, երբ նկատեցի, որ կապիտանն ինձանից հեռացել է և հետևում է վազող շարքերին: Այդ ընդմիջումն էս երջանիկ էի, եթէ նոյնիսկ նորից մտնէի շարքի մէջ և վազէի— որովհետև երկու ընդմիջումն էի քաշել: Շուարեւ էի: Ֆելդֆերեյլը մօտեցաւ և ասաց շատ օրոշակի.

— Գնա՛, հրացանդ ցած դիր, ազատ ես: Այո, այդ երազ չէր. ես այլևս չէի վազում և այժմ

էլ գնում էի հանգստանալու: Արագ քայլերով
և դողդոջուն ծնկներով աստիճաններից վեր ե-
լայ, հրացանս տեղը դրի և տարածուեցի մահ-
ճակալիս վրայ ու աչքերս փակեցի: Ի՞նչ զգաց-
մունք էր տիրել ինձ-չգիտեմ. միայն մի մոլոր,
անհասկանալի նախազգացում մտքիս առաջ
հեռու, միզապատ հորիզոնի վրայ երևացող սև
կէտի նման շարժում էր դէպի ինձ:

Ես շնչում էի ծանր... կախաղանից ազատ-
լած, բայց նոր դատավճիռը դեռ չլսած մար-
դու անորոշութեան զգացումով:

Չկարողացայ երկար պառկել. վեր կացայ,
մօտեցայ պատուհանին. շարքերը վազում էին
նոյն արագութեամբ, բայց առաջին հայեացքից
կարելի էր նկատել, որ նրանց ոտքերը թմրել
էին: Առջևից վազում էր աջ թևի պարագլուխ
(правофланговый) երկարահասակ Կորսունը, նրա
կողքին՝ կնճռաղէմ ու չեչոտ Մարչենկօն և
միւսները՝ նրանց յետևից: Կորսունը, որ երբեք
յոգնել չգիտէր և բոլոր խաղերի մէջ ամենա-
խիզախն էր, հազիւ էր կարողանում գլուխն ու-
ղիղ պահել. նրա հրացանի սուլինն էլ էր օրօր-
ւում այս ու այն կողմ: Միջին շարքերը հետե-
ւում էին նրանց՝ բութ հայեացքները գամած
միմեանց ծոծրակին: Իսկ վերջին շարքերում,
որտեղ աւելի կարճահասակներն էին և թուլա-
կազմները, կատարեալ անկարգութիւն էր տի-
րում. ոմանք ոտքերը խփում էին առջևից

վագողների կրօնականներին, ոմանք յուսահատ ճիգ էին թափում միւսներին հասնելու. և նրանց սուկիները բամուս գիմաց տարուբերող տերևագուրկ ճիւղերի նման ճօճուում էին, գիպչելով իրար, կամ չափազանց հեռանալով միմեանցից.

Լղարիկ Լևինը կծկուած հսկայ հրացանի տակ, այլևս ոյժ չունէր մի ձեռքով պահելու այն, և յաճախ աջ ձեռքը գողաբար մօտեցնում էր նրա կոթին: Յայտնի լօգիւրները (զալը, թամբալ) շարունակ վայր էին ընկնում ու նորից ոտքի ելնում, լսելով կապիտանի զայրածայն հայհոյանքները:

—Վագեցէք կարգին, ես ձեր բոլորի հոգին կը հանեմ. թէկուզ բոլորդ էլ վայր թափուէք, պիտի վագէք—գոռում էր նա : Եւ նրանք վագում էին յուսահատ անձնատուութեամբ, աշնան զօրեղ բամուս բերանն ընկած գունատ տերևների պէս:

Հոգիս լցուեց մի անբացատրելի դառնութեամբ. մի տարօրինակ ցանկութիւն զարթեց իմ մէջ—կարծես նախանձում էինրանց. և եթէ վստահանայի, պատրաստ էի հրացանս վերցնել, ցած իջնել և խնդրել կապիտանից.

—Ձերդ բարձր բարեծննդութիւն, թոյլ տուէք ինձ նորից շարքերը մտնել...: Մինչև անգամ այդ բառերը ասում ու կրկնում էի մտքիս մէջ, դասը չգիտցող աշակերտի անվրս-

տահուլթեամբ: Բոլորի տանջանքը-խմբական տանջանքը թոյլ չէր տալիս ինձ միայնակ վայելել իմ երջանկութիւնը. նաւի շուրթին կանգնած նաւաստիի պէս, որի բոլոր ծառայող ու ճանապարհորդող ընկերները շուրն էին թափւել նաւի վրայից, ես նայում էի պատուհանից՝ մէկ հեացող, շնչասպառ շարքերին, մէկ՝ կապիտանի գունատ ու դողացող շրթունքներին:

Բայց ահա Կորսունը, մինչև անգամ Կորսունը տատանուեց. հրացանը ծռուեց. նա աջ ձեռքը մօտեցրեց նրա կոթին— ուղղելու, սուլինը դիպաւ կողքից վազող Մարչենկոյի սուլինին, և երկուսը միասին փռուեցին գետնին. Երկրորդ զոյգը նրանց վրայ տարածուեց, և այդ ժամանակ լսուեց կապիտանի ուժգին, խլացուցիչ ձայնը.

— Կանգնեցէք...

Շարքերն արձանացան:

— Ես բոլորիդ շնչասպառ կանեմ, մինչև երեկոյ կը վազէք այսպէս, վաղն էլ կը վազէք, միւս օրն էլ. .

— Сми р..но!.. ոչ որ չչարժուի. налѣ'...во!... (դէպի ձախ): Բոլորը շրջուեցին դէպի ձախ և հայեացքներն ուղղեցին կապիտանին, որ բռնունքի մէջ գնդած թաց թաշկինակով քրտինքը սրբում էր մուայլ ձակատից:

— Ի՛նձ նայեցէք բոլորդ անշարժ: Նա մօտեցաւ հեալով աջ թևին, Կորսունին նայեց և

այդպէս հերթով գնաց մինչև վերջին կարգը։ Հեռացաւ շարքից արագ քայլերով, կանգնեց նրանցից 15 քայլ հեռու, գինւորական ճշտապահութեամբ շրջուեց կրունկներէ վրայ, շարքերին յառեց արիւնով լցուած աչքերը և բերանը լայն բանալով գոչեց օրհասական ձայնով, իւրաքանչիւր բառը հառ-հառ շեշտելով.

— Ո՞վ է վերցրել Սկարեադի փողերը, թող դուրս գայ շարքից...։ Անգնդային, խոր լուծեան մէջ խորասուզուեցին նրա բառերի վերջին հնչիւնները։ Մի սարսուռ անցաւ շարքերով, և այդ սարսուռը իմ աչքերից երախտագիտական արցունք հոսեցրեց. երջանկութիւնը մի րոպէ պարուրեց ինձ իր տաք շնչով, ինչպէս պարուրում է առաջին ճառագայթը ձիւնի տակից նոր դուրս եկած ճնծաղիկի գլուխը։ Կուգէի այդ րոպէին ցած իջնել, մոռանալ գինւորական ամեն կարգապահութիւն և համբուրել կապիտանի շրթունքները, որոնք կէս ժամ առաջ ինձ ազատել էին մեղադրեալի նստարանից։

— Ոչ ոք չէ՞ դուրս գալիս—լաւ...։ Ուղիղ...։ Այս անգամ նրա ձայնի մէջ զայրոյթի հետ դուրս հոսեց մի խոր թախիծ.

— Վազեցէք...։

Նորից վազեցին շարքերը... մի քանիսը նորից վայր ընկան. և ես աչքերս լայն բացած, հետաքրքրութեամբ հետևում էի նրանց ոտքերին, անզգայաբար օրօրում էի իրանս նրանց

իրանները նման և սպասում էի այս տարօրինակ ճակատամարտի ահեղ վախճանին:

— Կանգնեցէք, նորից հնչուեց ձայնը, այս անգամ մի քիչ մեղմացած: Եւ կապիտանը մի քանի քայլ մօտենալով շարքերին, ասաց համոզիչ ու հաստատուն ձայնով.

— Տղայք, եղբայրներ, ուղիղ տասը տարի է ծառայում եմ զօրաբանակում, և ինձ ստորադրեալ վաշտի մէջ այսպիսի խայտառակ դէպք չի պատահել:

Զինուորը հայրենիքի և թագաւորի ծառայութեան վեհ գործին էնուիրուած. և իւրաքանչիւր զինուորական՝ սկսած հասարակ զինուորից մինչև բարձրաստիճան զօրապետը, պարտաւոր է զինուորական պատիւը անարատ պահել: Դուք պէտք է հպարտ լինիք, որ հայրենիքի անուան ու պատուի պաշտպանութիւնը ձեզ է յանձնուած. դուք պէտք է այնպէս վարուէք, որ բոլորի համար ձեր ազնւութիւնը օրինակ լինի: Ես մինչև օրս երջանիկ էի զգում ինձ, որովհետեւ համոզուած էի, թէ իմ ձեռքի տակ եղած բոլոր ծառայողները ազնւութեան կանոններից չեն շեղուում: Բայց այս խայտառակ դէպքը կը մնայ անջնջելի իմ յիշողութեան մէջ և ես, եթէ չկարողացայ ճշմարտութիւնը երևան հանել, մնաս բարև կասեմ իմ պաշտօնին. որովհետև այսօրուանից մեր վաշտի անունը խայտառակուած է, և բոլորը ինձ մատով ցոյց կը տան

ասելով. «Ահա կապիտանը այն վաշտի, որի մէջ
կատարուեց խայտառակ գողութիւնը. միւս
կողմից՝ ես բոլորիդ վրայ պէտք է կասկածեմ:
Սակայն ով էլ որ է գողը, թող չկարծի, թէ իր
արածը կը մարսի և ինքը նորից կարժանանայ
իր տան ու ընտանիքի տեսութեանը: Ես ամեն
հնար գործ կը դնեմ և կը գտնեմ նրան, և այն
ժամանակ Աստուած հեռու տանի, թէ ինչ կը գայ
նրա գլուխը. լաւ է այդ մասին չմտածէք, որով-
հետեւ չէք կարող երեւակայել այն վիճակը, որ
սպասում է նրան: Ես ամեն ջանք գործ կը դնեմ
և նրան ամենախիստ պատժի ենթարկել կը
տամ. աքսոր կուղարկեմ, բոլոր վաշտերի առաջ
կը խայտառակեմ: Որքան ուշ գտնեմ գողին,
այնքան էլ վատ կը լինի թէ ձեզ՝ և թէ նրա
համար: Մինչև նրան գտնելը ես դժոխք կը
դարձնեմ ձեր գորատունը...:—Այստեղ նրա
ձայնը բարձրացաւ և դողաց:

—Իսկ որպէսզի այդ ամենը չկատարուի—
մեր անունը չխայտառակուի, դուք չչարչար-
ուէք, յանցաւորը շատ խիստ պատիժ չուտի,
ամենի առաջ թող դուրս գայ և խոստովանի
նա, ով կատարել է այդ գողութիւնը...:

Աշնան անգոր ճառագայթները, ամպերի
արանքից վախկոտութեամբ դուրս սողալով, ըն-
կան օդի մէջ շարուած գլխարկների թաց հար-
թութեանը, գունատ ստուեր ձգելով գետնի
վրայ. դա մի երկար, ատամնաւոր պարսպի

ստուերի էր նման, որ ամենեւին չէր շարժուում:

— Կրկնում եմ երկրորդ՝ և վերջին անգամ. ձեզ համար էլ վատ կըլինի, ինձ համար էլ. թող քաջութիւն ունենայ դուրս գալ նա, ով զրամատնից վերցրել է Սկարեագի փողերը, նրա գրքոյկով:

Ոչ ոք չշարժուեց. անշունչ ու լուռ՝ փայտերի վրայ ցցուած կմաղքների նման, զինւորները անզգայ հայեացքով նայում էին նրան: Այդ ժամանակ կարծես մի հրաբուխ գալարուելով կապիտանի ներսում, պատրաստուում էր դուրս ժայթքել: Նա դողդողաց ամբողջ մարմնով, երկու ձեռքը կանթեց աջ ու ձախ կողմից գօտկատեղի վրայ, աջ ոտքը առաջ դրեց, հեզնոդ ու յաղթական դիրքով կանգնեց, գլուխը թափահարեց և շրթունքները լայն բանալով, ամբողջ ուժով գոչեց.

— Ուրե՛...եմն...

Նրա ձայնը կերկերաց, նա տատանուեց և հագիւ կարողացաւ իրեն պահել ոտքի վրայ: Զինւորների իրաններն առաջ եկան, զօրաշարքը կարծես տարուբերուեց իբրեւ մի հսկայ շոգենաւ, որ պատրաստուում է ճանապարհ ընկնել. յանկարծ վերջին շարքերը խլրտացին: Բոլորը նայեցին այն կողմը և միաձայն, անգիտակցօրէն ատամների արանքից մի խլաձայն, զրսպուած մռնչոց արձակեցին:

— Ա՛...ա...ա... կրկին Իվանէնկօն...:

Ձլսեցի՛ ինչ ասաց Իվանենկօն. միայն տեսայ թէ ինչպէս աջ ձեռքով հրացանը ուղղահայեաց կպցրած իր կարճահասակ մարմինն, այդ գունատ զինուորը աչքերը ցած գցած, կանգնել էր կապիտանի առաջ և մահապարտի նման կցկտուր բռներ էր արտասանում:

Կապիտանի կուրծքը բարձրացաւ, իջաւ, և ինչպէս հնոցի միջից՝ նրա բերանից գլորշախառն փնչոց արձակուեց. նայեց զինուորներին, աջ ձեռքը մեկնեց դէպի շարքերը և ապա արագ տանելով դէպի զօրանոց, ասաց մեղմ ձայնով.

— Въ казарму, ребята... (դէպի զօրանոց, տղայք): Միմեանց հրելով ու խեղդուկ ճիչներով զինուորները աստիճաններից վեր սլացան:

Կապիտանը զօրանոց չմտաւ. ֆելդֆեբելը տխուր՝ ընչացքները կրծելով բարձրանում էր Իվանենկոյի յետևից: Իվանենկօն մտաւ զօրանոց, հրացանը տեղը դրեց և ամբողջովին կասկարմիր դէմքով մեզ նայեց:

— Այ դու գող անասուն—, յարձակուեցին նրա վրայ զինուորները բռունցքները սեղմած:

— Ձե՞ս ամաչում—, գոռում էր Մարչենկօն— աւագակ...

— Սրանով ճակատդ կը ջարդեմ ան—, ցոյց էր տալիս պայտած կրունկը Սուսանովը:

Իսկ Կորստենը մօտեցաւ նրան, շրթունքները սեղմեց իրար, կոկորդը խաղացրեց, երեսը

մօտեցրեց նրա երեսին և բարձրաձայն «թո՛ւհ» անելով, մի ահագին գունդ թուր շարտեց ուղիղ նրա ճակատին:

Միւսները յաղթանակող ոգևորութեամբ հետևեցին նրան:

Իվանենկօն լուռ՝ թևով սրբում էր երեսից թուրը, որ քթի երկու կողմից գուգահեռու առունքի նման հոսում էր դէպի բերանը: Մինչև անգամ վախլուկ Օվէեանը, որ նորակոչ հայերից էր և ոռոսերէն ամենևին չգիտէր, սիրտ առաւ և նրա վրայ յարձակուեց ասելով.

—Ո՛յ, տի սկատին, արեստան, դենգի վարիլ հա՛, վօտ տերէ դենգի (այ դու անասուն, բռնաւոր, փող ես գողացել հա՛... ա՛յ քեզ փող), և ցոյց տուեց բռունցքը, անվստահութեամբ զինւորներին նայելով:

—Ի՞նչ է պատահել ձեզ, անպիտաններ, կորէ՛ք—, ասաց կատաղութեամբ ֆելդֆերելը և, ապա դառնալով Իվանենկոյին, թակարդն ընկած որսին նայող որսորդի անտարբերութեամբ ասաց.

—Իսկ քեզ յետոյ կը տեսնենք, պատուական եղբայր:

Սօսակցութեան առարկան այդ օրը Իվանենկօն էր:

Դէպքն այսպէս էր պատահել: Սկարեադն այն բախտաւոր զինւորներից էր, որոնք տա-

նից երբեմն-երբեմն փող էին ստանում: Զին-
ւորներն առհասարակ շատ սակաւապէտ են, և
նրանցից շատերը ամսական 2—5 ռուբլի ստա-
նալով, կարողանում են տարուայ վերջը մի
փոքրիկ գումար տնտեսել. իսկ զրա համար իւ-
րաքանչիւր գնդում կայ առանձին զինւորա-
կան զրամարկդ, որտեղ զինւորները պահ են
տալիս զրամբ: Սկարեադն ամսական չորս
ռուբլի էր ստանում և մէկ ու կէս տարուայ ըն-
թացքում կարողացել էր տնտեսել 30 ռուբլի:
Գրքոյկը նա պահում էր սնդուկի մէջ իր միւս
իրերի հետ:

Քննութիւնը ցոյց տուեց, որ Իվանենկօն
ծածուկ վերցրել էր Սկարեադի զրքոյկը սնդու-
կից և ներկայանալով գանձապահին, ստացել էր
նրանից Սկարեադի փողերը և ստորագրել էր
նրա փոխարէն: Նա ստորագրութիւնն այնպէս
էր նմանեցրել, որ ոչ մի տարբերութիւն չկար
նրա և Սկարեադի իսկական ստորագրութեան
մէջ: Քննութիւնը երևան հանեց նոյնպէս, որ
Իվանենկօն երկար ժամանակ Սկարեադի ազ-
գանունը գրել էր, որպէսզի ընտելանայ ստորա-
գրութեանը, որովհետև նրա թղթերի մէջ երևա-
ցին մի քանի անգամ գրուած հետեւեալ բառերը.

—«Ստացայ լիովին « » ռուբլի գումարը—
Վասիլ Սկարեադ»: Նշանակում է գողութիւնը
կատարելու համար յանցաւորը երկար ժամա-
նակ մտածել և նախապատրաստուել էր:



վանենկօն վաղուց յայտնի էր
իր փշացած վաբքով: Նը-
րան չէին սիրում, որով-
հետև ծոյլ էր ու բթամիտ,
անշնորհք կազմուածքով,
և վաղուց զինւորներէ շըր-
ջանում «գող» մականունն
էր վաստակել:

Երկրորդ տարին էր, որ Իվանենկօն ծառա-
յում էր մեր զօրաբանակում: Երբ մեզ բօտա-
ների բաժանելուց յետոյ, մենք մօտանք զօրա-
նոց և առաջին անգամ մեր հրամանատարը
այցելեց մեզ, Իվանենկօն ինձնից դէպի ձախ
4-րդ շարքումն էր կանգնած: Գնդապետը՝ մի
շատախօս և կատակաբան ծերունի՝ մեզ հետ ծա-
նօթանում էր, հարցնելով մեր ծննդավայրի,
հայրենիքի և ընտանեկան հանգամանքների մա-
սին: Երբ նա մօտեցաւ Իվանենկոյին, նրա դէմ-
քի վրայ մի ժպիտ խաղաց, և թեւը դնելով նրա
ուսին՝ հարցրեց:

— Տարիքդ լրացրե՞լ ես:

— Конечно! (Ի հարկէ) —, պատասխանեց Իվա-
նենկօն այնպիսի դէմք ընդունելով, ինչպիսին

կընդունէր գիմնազիաւարտ պատանին, եթէ մի անծանօթ շրջանում հարցնէին նրան. «Կարդալ գիտէ՞ք պարոն»:

— Պէտք է պատասխանել. такъ точно, Ваше Высокоблагородіе (հրամանք ես, Ձերդ բարձր բարեծննդութիւն), ուղղեց նրան գնդապետը:

Իվանենկօն գլխով նշան արաւ և շրթունքները շարժեց այնպէս, կարծես այդ բառերը կրկնում էր մտքում:

— Հապա ինչո՞ւ այդչափ փոքր ես երևում, հարցրեց գնդապետը:

— Հանգուցեալ հայրս շարունակ գլխիս էր խփում, Ձերդ բարձր բարեծննդութիւն, դրա համար կարճ մնացի. մայրս միշտ ասում էր նրան. «Ա՛յ մարդ, էլ տեղ չկա՛յ խփելու, որ հէնց գլխին ես տալիս». բայց նա չէր լըսում. գիտէ՞ք, նա այնպիսի ուժեղ բռունցք ունէր, որ մի անգամ մայրս ուշաթափուեց այդ բռունցքից. ասաց Իվանենկօն այնպիսի եղանակով, կարծես զանգատուելով պարծենում էր:

Գնդապետը ժպտաց, իսկ մենք բարձրաձայն ծիծաղեցինք:

— Ո՞րտեղացի ես—շարունակեց գնդապետը:

— Վեատկայի նահանգի «Սրլովկա» գիւղից, Ձերդ բարձր բարեծննդութիւն:

— Հայրդ վաղո՞ւց է մեռել:

— Լաւ չեմ յիշում, կարծեմ տասը տարեկան էի, երբ նրա փետացած դիակը փողոցից

տուն բերին:

—Ամուսնացած ես, թէ ամուրի:

—Ուզում էի ամուսնանալ, բայց Ջինայի ծընողները նրան ինձ չտուին. Արլովին ինձնից լաւ համարեցին: «Նա, ասում է, քաջ տղամարդ է. Սաշկան ինչ նրա թայն է—որք, երեխայ, օղի խմել անգամ չգիտէ»: Թէեւ ես հէնց այդ գիշերը գնացի օդատուն և առաջին անգամ ամբողջ կէս շիշ խմեցի, այնպէս որ հազիւ տուն բերին ինձ, այնուամենայնիւ Ջինային էլի Արլովին տուին: Յարմար աղջիկ մէկ էլ Կատերինան էր. գիտէ՞ք նա...

—Լաւ—, ընդհատեց նրան գնդապետը, վախենալով թէ նա մինչև երեկոյ սիրային արկածներ կը պատմէ—, այստեղ կը մոռանաս Ջինային էլ, Կատերինային էլ, և դարդ չես անիլ չէ՞...:

—Հրամանք ես, Ձերդ բարձր բարեծնընդուլթին, կը մոռանամ:

—Կարգալ գիտե՞ս—, շարունակեց գնդապետը:

—Տառերն հազիւ եմ ջոկում, Ձերդ բարձր բարեծնընդուլթին:

—Դպրոցում չե՞ս եղել:

—Ընդամենը 4 ամիս մնացի ուսումնարանում: Ուսուցիչ Սկարպիօնը ասաց, որ ինձնից մարդ չի դուրս գալ կանչեց մօրս և թեկիս բռնելով դուրս չալրտեց:

—Ինչո՞ւ չէիր սովորում:

—Գլուխս պինդ էր, բան չէր մտնում. ուսուցիչը միշտ զանգատւում էր, և մայրս էլ վկայում էր, որ ես զգում եմ:

Մենք բարձրաձայն քրքշացինք:

—Դժնւմ, զժնւմ... ասաց գնդապետը ժըպտալով և մի բանի անգամ մատով խփեց նրա գլխին:

Եւ նրա անունը մնաց «զգում»:

Իսկ երբ մի անգամ նա ֆելդֆեբելի սեզանի վրայից մի բաժակ օղի գողացաւ խմեց և կիսատ շի գլուխը ջուր լցրեց, բոլորը ծաղրելով ասում էին.

—Դժնւմ է, բայց օղիի համը լաւ գիտէ տղէն. միամիտ է ձեռնում, բայց գիտէ ինչպէս դողանայ օղին, որ չիմացուի:

Նա շատ կեղտոտ էր պահում իրեն, և ամեն օր առաւօտեան այցի (смотреть) ժամանակ եֆրէյտօրը *) նրա ձեռքերի, ոտքերի, կամ շորերի վրայ կեղտ նկատելով, ասում էր.

—Скати́на, ба́ра́нь... (անասուն, ոչխար), միթէ չես կարող մաքրել: Մի առաւօտ ամբողջ կէս ժամ նա՝ իր կեղտոտ փողկապը ատամների մէջ առած, կանգնաւազ տուեց (бѣгъ на мѣстѣ): Նա սկզբում շատախօս էր և միշտ

1) Եֆրէյտօրը հասարակ, բայց փորձուած զինուոր է. նա երբեմն փոխարինում է ենթասպային և սովորեցնում է նոր զինուորներին. նա ուսադիրների վրայ ունի մի-մի սպիտակ երիզ, որով տարբերւում է հասարակ զինուորից:

պարծենում էր, որ գնդապետն իրեն հետ շատ քաղցր է խօսել. բայց համարեա ամեն օր կրկնող պատիժները նրան սակաւախօս դարձրին: Եֆրէյտօրը շարունակ նրա ծնօտի տակին բռունցքով խփելով ասում էր.

—Էհ, եղբայր, ծառայել չգիտես, ես քեզ ցոյց կը տամ, թէ գնդապետը քեզ հետ ի՞նչպէս քաղցր խօսեց:

Վերջերքը նա համարեա լուռ էր: Եւ ոչ ոք էլ չէր ուզում իմանալ, թէ նա ի՞նչու այդպէս լռակեաց է: Ընդհակառակը շատերը գոհ էին, որ այդ կեղտոտ, ծոյլ, գող և դժուր արարածը իրենց այլևս չէ մօտենում: Իսկ երբ նրա սընդուկից դուրս եկաւ Լևինի կորած փողկապը, այնուհետեւ բոլորի համար պարզուեց, որ նա իսկական գող է. և շարունակ խփում էին նրա գլխին, ասելով.

—Գող դժուր, հայրդ այնքան է բռնցքահարել, որ յուսահատութիւնից խմել է ու մեռել քո դարդից—հայրասպան. և բոլորը ծիծաղում էին:

Ոչ ոք առհասարակ նրան չէր սիրում և չէր ընկերանում. իսկ ղրամարկդի դէպքից յետոյ արդէն, բոլորն սկսեցին ատել նրան, ոչ միայն այն պատճառով, որ նա մի խոշոր գումար էր գողացել այդպիսի ստոր եղանակով, այլև նրա համար, որ նրա պատճառով մեր կապիտանը

սաստիկ բարկացել էր և աւելի յաճախ էր մեզ
չարչարում:

Ի վանքերից Վրայ երկու պահապան նշա-
նակեցին, որ չկարողանայ փախչել: Նրան զա-
տեցին մեզանից, և այլևս զբաղմունքներին ու
խաղերին չէր մասնակցում: Նիհար, նախկին
կարմրութիւնը կորցրած այտերով, նա առա-
ւօտները զարթնում էր և սպասում մեր հայ-
հոյանքներին: Բոլորն էին հայհոյում նրան, վի-
րաւորում, շորերից քաշում, «գող, անպիտան»
բառերը շարտում նրա ճակատին. իսկ նա՝ մանր
— ճպճպան աչքերը զարձնում էր մեզ և խղ-
ճալի դէմք ընդունում:

— Տեսնո՞ւմ ես, ինչ խեղճն է. կատու է դա-
ռել. ա՛յ ես քուհէնն անիծեմ..., ասում էր հըս-
կայահասակ Կորսունը, քաշելով նրա օձիքից:

Ո՞նց մտար սնդուկը և վերցրիր գրքոյկը,
Վեատկայի մո՛ւկ —, գոռում էր հաստիկ Պի-
խունը —, խօսիր է, ինչո՞ւ ես լռում. գանձապա-
հին լաւ խաբեցիր հա՛... լեզուդ բացուե՞լ էր:
Այժմ անմեղացել է, վարդապետ է ուզում
դառնալ. տես, քոսա միւրուքն էլ երկարացնում
է. էհ եղբայր, բեզ ոչ թէ վանք: այլ դիսցիպ-
լինարնի բատալիոն պիտի ուղարկել. այնտեղ
հոգիդ գուրս կը գայ օրական 12 ժամ հրացա-
նի տակ վազելով, միւս աշխարհումն էլ հոգիդ
բոցերի մէջ կը վառուի և այս իծամիրուքդ կը
խանձուի: Եւ Պիխունը քաշեց ու ժգնութեամբ

նրա մաղերից: Մի խեղդուած «օֆ» միայն
դուրս եկաւ Իվանենկոյի անշարժ շրթունքների
արանքից:

Նա նստած մահճակալին, սնդուկը կողքին
դրած, իրերը խառնում էր և կարգի գցում:

— Տես է, տես է, այս երկար ոտի փաթ-
թանները, ո՞վ գիտէ, ո՞ւմից է գողացել. թուրքի
խանութից ես թուցրել հա՛մ, աւազակ—ազազա-
կեց Մարչենկօն—, ամօթ, ամօթ քեզ. դեռ զին-
ւոր էլ ես. զինւորի պատիւը ոտի տակ տու իր.
կապիտանին մինչև անգամ ամօթահար արիւր
քո արարքով...:

Նա փաթթաններն ու սրբիչը դրեց սն-
դուկը, այնտեղից հանեց մի գլուխ սխտոր և
մի կտոր սև հաց, սխտորը մի քանի անգամ
ամուր քսեց հացին և, ձախ արմուկը յենելով
սնդուկին, աջ ձեռքով հացը բերանը տարաւ:
Նա կծում էր հացը, ապա մի փոքրիկ կտոր
սխտոր և, աչքերը ցած գցած, ծամում էր:

— Հարձմ ըլնի էն հացը, որ ուտում ես—,
գոռաց Պիխունը, և մինչ Իվանենկօն հացը բե-
րանը կոխած պատրաստւում էր կծել, նա
գլուխը թափահարեց և ուժգնութեամբ շունչ
բաշելով, թքեց նրա հացի վրայ: Իվանենկօն
լուռ՝ թևով սրբեց հացը, նրա աչքերից արցունք-
ներ գլորուեցին թի երկու կողմերից հացի վը-
րայ, և նա արցունքախառն սխտորոտ հացը շա-
րունակեց կծել ու ծամել հառաչելով:

Նա մի գարմանալի լուսթիւն էր պահպանում և ոչ մէկի հայհոյանքին չէր պատասխանում: Ու նրա օրը՝ օր չէր: Մի շաբաթ մնաց այնուհետև զօրանոցում, և այդ շաբաթուայ ընթացքում՝ էլ զինւոր չմնաց, որ նրան չթքէր ու չհայհոյէր: Խսկ նա տանում էր բոլորը լուռ, գլխակոր, և նրա պատասխանը լինում էր կամ մի խղճալի հայեացք, կամ մի խեղդուկ, ծանր հառաչանք...

Մեր գնդի դատարանը վճռեց նրան երկու տարի կարգապահական բաժանմունքը (дисциплинарный батальон): Վերջին օրը, երբ նրան տանում էին զօրանոցից երկու հրացանաւոր պահակներ, նա մի տխուր հայեացք ձգեց զօրանոցի վրայ, աչքերը ճպպացրեց, բերանը բաց արաւ, կարծես ուզում էր մի բան ասել, բայց շրթունքները սեղմեց ատամներին և աչքերը ցած գցեց:

Երկու կաթիլ արցունք գլորուեցին նրա նիհարացած այտերի վրայով: Նա դանդաղ իջաւ սանդուխքից բակը: Առաջին անգամն էր, որ անձրևի հետ ձեան հատիկներ էին թափւում: Երկինքն ամբողջապէս սպիտակ-գորշ գոյն էր ստացել: «Աքսորականի օր» —, սրախօսեց անհոգութեամբ զինւորներից մէկը:

Բակի մէջ նա կանգնեց, յետնայեց — երևի մի բան ասելու նպատակով, բայց զայրոյթ նրկատելով մեր դէմքերի վրայ, նորից գլուխը

շուռ տուեց և ատամների մէջ մրմուռալով առաջ գնաց:

Նրա վերջին, անձրևախառն ձիւնի մէջ նկարւող հայեացքն այնքան խղճալի էր, որ սիրտս ճմլուեց. մի ամբողջ շաբաթ քնելուց առաջ շարունակ այդ դէմքն էր պատկերանում աչքերիս առաջ: Աչքերս բաց էի անում, մտքով սլանում էի նրա յետեից և նրա վիճակի մասին մտածում. փակում էի աչքերս, դէմս կանգնում էր Իվանենկոն շինելի մէջ կծկուած, ձեռքերը թևերի մէջ հագցրած, գորշ, արտասուող երկնքի տակ, ցեխոտ գետնի վրայ, երկու պահակ աջ ու ձախ կողմում, ողորմագին հայեացքն ինձ ուղղած...: Աշխատում էի այդ պատկերն հեռացնել աչքիցս, սակայն նա չէր հեռանում, մինչև քունը չէր թմրացնում ջարդուած մարմինս: Բայց ես մի օր, ջատ յետոյ հասկացայ, թէ ինչո՞ւ այդ պատկերը երևում էր ինձ ու տանջում:

Անցաւ բաւական ժամանակ, և մենք Իվանենկոյին միանգամայն մոռացանք: Էլ ոչ ոք չէր խօսում նրա մասին. կարծես այդ փոքրիկ մարդը մեզ հետ չէր էլ ծառայել ամենևին:

Եւ ես էլ միւսներին հետ դէպքը մոռացութեան տուի ու նրա պատկերը ջնջեցի յիշողութեանս միջից. և գուցէ այլևս երբեք չմտաբերէի նրան, եթէ մի անսպասելի հանգամանք չլինէր:



եր վաշտում մի հին զինւոր
կար: Թէև 24 տարեկան՝
բայց դէմքը խորշումած՝ պա-
ռաւի տպաւորութիւն էր
անում: Զինւորները բոլոր
հին ծառայողներին առհասարակ
«Դեադկա» են անուանում. *) բայց
նրան բոլորը--թէ նոր և թէ հին զինւորներն էին
այդ անունը տալիս:

«Դեադկա Ստեփան» — այսպէս էր նրա
անունը. երբէք մէկը նրան «Դեադկա» չէր
ասում, կամ «Ստեփան» ալ այդ երկու բառը
միասին «Դեադկա Ստեփան»: Մինչև անգամ մեր
Փելզֆերելը, որ բիթը միշտ բարձր էր պահում
և երբէք կատակ անել չէր սիրում, և նոյն իսկ
կապիտանը, յաճախ կատակով նրան այդպէս
էին կանչում:

— «Դեադկա Ստեփան», այսօր քէֆդ տեղը
չի երևում, չլինի՞ վատ նամակ ես ստացել.

*) Դեադկա՝ հօրեղբայր. այստեղ նշանակում է «խալ-
ֆայ»:

կինդ հիւանդ է, կամ գուցէ նոր զաւակ է ծնել
և առանց բեզ կնունք են արել—, կատակում
էր երիտասարդ պարուհիկ *) Նիկալայը, որ
ամենից շատ էր սիրում նրան ձեռ առնել: Մի
օր պարուհիկը մի խումբ օրիորդների հետ մը-
տաւ մեր զօրանոցը և նրանց հետ շրջելով ցոյց
էր տալիս մեր կացարանը. պատուհանի մօտ
օրիորդներին նա մի բան փսփսաց ժպտալով և
ապա յետ նայելով կանչեց.

— Ստեփան, Դեանդկա Ստեփան—: Եւ երբ նա
վազելով եկաւ ու ձեռը կնճռոտ ճակատին դը-
նելով կանգնեց նրա առաջ, օրիորդները ձեռ-
քերը միմեանց խփելով քրքջացին. իսկ նրան-
ցից մէկը՝ նորատի և կապտաշեայ՝ բարակ-յըս-
տակ ձայնով ասաց.

— Ну-ка, «Դեանդկա Ստեփան», մի բաժակ
շուր բերէս:

«Ստեփան Դեանդկան» թեկերը թափահարելով
ու օրօրուելով, բթածայրերի վրայ վազեց և մի
քանի րոպէից բաժակը ձեռքին կանգնեց նրանց
առաջ. օրիորդը վերցրեց շուրը, նայեց բաժա-
կի մէջ և ապա տարաւ շրթունքներին: Ստե-
փան Դեանդկան ձեռքը ճակատին դրած, ան-
թարթ նայում էր բաժակին:

— Կին ունի՞ս, հարցրեց նրան օրիորդը:

— Такъ точно, ваше... ва... а... ше... (հրամանք

*) Պարուհիկ նշանակում է երկրորդ աստիճանի սպայ:

ես, Ձերդ... Ձերդ...) կմկմաց Դեադկա Ստեփանը, չիմանալով թէ ինչ տիտղոս տայ նրան... և շատ յետոյ աւելացրեց... «пани» (պանուհի, աղջիկ պարոն)։ Օրիորդները կրկնացին։

— Երեխաներ էլ ունի՞ս, շարունակեց օրիորդը։

— Такъ точно... пани. երկուսը, Աստուած չուզեց որ աւել ունենամ, երկրորդի ծնուելու օրը ինձ զինուոր վերցրին. ու շատ լաւ եղաւ, թէ չէ՝ եթէ հիմա 4 երեխայ ունենայի, ապրել անկարելի կըլինէր...։

— Ձե՞ս վախում որ կինդ ուրիշին սիրէ, հարցրեց Նիկալայը։

— Ни какъ нѣтъ! Ваше благородіе, չեմ վախում, Դաշան հոգի չի կորցնի, աստուածավախ աղջիկ է. բայց գիտէ՞ք, հայրս շատ աղքատ է, տունը լաւ չի կառավարւում, վախում եմ անհոգի Սիսոյիւր՝ մեր ստարոստան նրան ճամբից հանի. գիտէ՞ք, նա շատ հարուստ է և վաղուց աչք էր դրել Դաշայիս վրայ։

— Խեղճ, ասացին ծիծաղելով միւս օրիորդները։

— Ոչի՞նչ, դարդ մի անիր, մի քանի ամիս է մնում. կաղատուես, կըգնաս Դաշայիդ մօտ և ուզածիդ չափ կըհամբուրես երեխաներիդ ու նրան—կարօտդ կառնես—, ասաց Նիկալայը և դառնալով օրիորդներին, առաջարկեց հեռանալ զօրանոցից։

Այնուհետև նա շարունակ պարծենում էր, որ պարուհիկ Նիկալայի գեղեցիկ հարսնացուն — այդպէս էր ասում նա — իրենից ջուր է ուզել, և ինքը իր իսկ ձեռքով նրա համար աղբիւրից ջուր է բերել:

«Դեադկա Ստեփանը» Ռուսաստանի՝ չեմ յիշում թէ նահանգիցն էր. բայց երկարած և — նեղ աչքերը, երեսին տափակած բիթը, խորշոմած, գունատ դէմքը, որի վրայ մի քանի՝ հատ-հատ մազեր էին երևում, ցոյց էին տալիս, որ նա Ղազանի թաթարների սերնդից պէտք է լինէր:

Նա իրեն իսկ «դեադկայի» նման էր պահում. բոլորից պահանջում էր, որ իրեն հետ «հանաք չանեն», եթէ ոչ, ցոյց կը տայ թէ ինքն ով է: Հասարակ բանի համար կռիւ էր գցում, բայց ճիշտ մեծաւորի նման՝ ինքն էր կատակ անելով հաշտւում: Շատ անգամ սուտ հիւանդանում էր, որպէսզի ծառայութեան չգնայ: Այդպիսի դէպքերում՝ ֆելդֆեբելը, որ մի ուրիշի վրայ սաստիկ կը բարկանար և կը հայհոյէր, նրան այս խօսքերով էր դիմում.

— Ну, что (ի՞նչ է), «Դեադկա Ստեփան», էլի ծովուծիւնդ բռնե՞ց, էծերդ եկա՞ն. եղբայր, այդպէս ծառայել չի լինի —, և անցնում էր նրա մօտով:

«Դեադկա Ստեփանը» օդիի հետ շատ բարեկամ էր և, միշտ շուկայից վերադառնալիս, ձախ

ձեռքը թագցրած էր լինում շինելի թևի մէջ. այդ նշան էր, որ նրա թևի մէջ կէս շշանոց է տեղաւորուած. այդ դրութեամբ նա յաճախ մտնում էր ֆելդֆերելի առանձնասենեակը և մի քանի ըոպէից յետոյ ձեռքերը դուրս ձգած թևից, ուրախ ոստիւններով դուրս էր գալիս այնտեղից: Երեկոյեան ժամը 9-ի ստուգութեան (повѣрка) ժամանակ շատ անգամ նա մեզ հետ շարքի մէջ չէր կանգնում: Երբ նրա ազգանունը կարդացւում էր, մի քանի վայրկեան լռութիւն էր տիրում և ապա «Я» (ես, աստ) բառի փոխարէն լսւում էր օրապահի ձայնը.

— չիւանդ է: Իսկ ֆելդֆերելը գլուխը լուռ շարժում էր: Քանի, քանի անգամ նա հրացանը ուսին ժամերով բակում կանգնել էր պատժուած հարբեցողութեան պատճառով: Մի քանի անգամ կարցեր*) էր նստել և շատ անգամ հերթից դուրս օրապահութիւն էր արել. բայց պատիժներից յետոյ նա կրկին նոյն «Դեադկա Ստեփանն» էր: Եւ ոչ ոք չէր էլ փորձում նրան նախատել միւս պատժւողների նման:

Իսկ նոր զինւորները նրա ձեռքից ազա-


*) Կարցերը զօրանոցի մօտ գտնւող մի բանտ է, որտեղ բանտարկւում են թեթև յանցանք գործող զինւորները առանց դատի—իշխանաւորներից որևէ մէկի հրամանով. ֆելդֆերելը իրաւունք ունի մինչև 1 օր կարցեր նստեցնել զինւորին:

տում չունէին: Բոլորին հայհոյում էր ու հրամայում՝ ինչպէս մի իշխանաւոր: Առաւօտը, երբ գինւորները թէյամանը ձեռքերին շարւում էին մեծ ինքնաեռի շուրջը տաք ջուր վերցնելու, յանկարծ երևում էր «Դեադէա Ստեփանը»՝ մեծ, դեղին պղնձէ թէյամանը ձեռքից կախ ընկած. և միւս ձեռքով սև հացի ահագին կտորը բռնած, ագահաբար կծելով ու արագ ծամելով մօտենում էր դանդաղ. բոլորը գիտէին, որ նա հերթի սպասելու չէ, ուստի թոյլ էին տալիս, որ ամենից առաջ նա վերցնի ջուրը: Եթէ մէկը չէր գգուշանում և թէյամանը թողում էր ինքնաեռի ծորակի տակ, այն ժամանակ «Դեադէա Ստեփանը» ոտքով դէն էր հրրում նրա թէյամանը և իրանը դնելով նրա տեղը, բարկացած ասում էր բերանի հացով թուշն ուռցրած.

— Էհ, եղբայր, դեռ որքան պիտի ծառայես, որ «դեադէա» դառնաս: Եւ ոչ ոք ոչինչ չէր ասում նրան այդ ապօրինութեան համար, որովհետև գիտէին, թէ նա ինչպիսի հայհոյանքներ էր թափելու, բերանից թոցնելով թքախառն հացի կտորները:

Իսկ նրա քննը՝ հռչակուած էր: Հէնց որ զբաղմունքները վերջանում էին և գինւորներից իւրաքանչիւրը մի որևէ ազատ պարապմունք էր ձեռք առնում— ոմանք շոր էին կարկատում, ոմանք գիրք կարդում, ոմանք էլ

զօրանոցն աւելում կամ հրացանը սրբում,
«Դեաղկա Ստեփանը» անուշ-անուշ խումփա-
ցնում էր: Երեկոյեան ստուգութիւնից յետոյ
անմիջապէս քնում էր նա: Կամ քնած խռմ-
փացնելիս, կամ մէկն ու մէկին ծաղրախառն
հայհոյելիս, կամ հարբած, օրօրուելով ման
գալիս կը լինէր նա—ուրիշ կերպ չեմ մտաբե-
րում նրան: Նա տանից ոչ մի կոպէկ չէր ստա-
նում. նրա ոռճիկն էր միայն—2 ամիսը 45
կոպէկ, սակայն նա միշտ հարբում էր, և յայտ-
նի չէ, թէ որտեղից էր փող գտնում: Նա
յայտնի էր և իր ժլատութեամբ. կոպէկի հա-
մար այնպէս աղմուկ կը բարձրացնէր, որ ամ-
բողջ զօրաբանակը նրա շուրջը կը հաւաքուէր:
Ես սաստիկ ատում էի «Դեաղկա Ստե-
փանին»:





ի չտեսնուած փոփոխու-
թիւն եկաւ «Դեադկա Ստե-
փանի» վրայ Իվանենկոյի
յայտնի դէպքից յետոյ: Նախ
մենք նկատեցինք, որ նա
երեկոյեան ընդհանուր աղօթքից
յետոյ, իր սովորութեանն հակառակ,
փոխանակ անմիջապէս դէպի անկողին վազե-
լու, դանդաղ քայլերով մօտենում էր զօրանո-
ցի ձախակողմեան պատի վրայ շարուած պատ-
կերներին և Աստուածածնի մեծ, դեղին շրջա-
նակաւոր պատկերի առաջ ծունկ չոքելով,
գլուխը կանթեղի տակի ստուերի մէջ պահած,
լուռ աղօթում էր...:—«Դեադկա Ստեփանը»
հոգին միտն է գցել—հեգնում էին մօտից անց-
նող զինւորները:

Առաւօտները թէյ վերցնելիս նա հերթի էր
սպասում, որ աւելի զարմանալի էր: Մի օր՝
ընդամենը 4 ամիս զինւորութիւն արած և եր-
դումն էլ չտուած Ստեշենկօն ինքնաեռից շուր
վերցնելիս երբ նրան տեսաւ մօտը կանգնած,

իր թէյամանը դէն քաշեց և նրան ճանապարհ տուեց ասելով.

— Դեռդեկա Ստեփան, ջուր վերցրէք:

Իսկ նա գետնին յառած աչքերը նրան դարձրեց և անսովոր մեղմութեամբ ասաց.

— Ոչինչ, թող լցուի, ես յետոյ կը վերցնեմ: Այս չտեսնուած բան էր, և բոլորի զարմանքը շարժեց:

Նա համարեա ամեն օր կանգնում էր երեկոյեան ընդհանուր աղօթքին, շատ սակաւ էր հիւանդանում և կարծես օղիից էլ ձեռք էր վերցրել. մինչև անգամ Նոր-տարուն նրան հարբած չտեսանք: Բայց ամենազարմանալին այն էր, որ նա էլ առաջուայպէս չէր քնում, և գիշերները նրա խռմփոցը անընդհատ չէր լսուում: Նրա հին սովորութիւններից միայն ժլատութիւնն էր մնացել և նոյնիսկ կրկնապատկուել էր. նրա չխմելն էլ ժլատութեամբ էին բացատրում:

Այս բոլոր փոփոխութիւնները շատ զարմանալի էին, բայց ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում, և իսկի չգիտէինք էլ, թէ իսկապէս ո՞ր օրից սկսեց նա փոխուել: Այժմ միայն, երբ ինձ համար ամեն բան պարզ է, ես կարողանում եմ աղօտ կերպով դէպքերն յիշել և նրա փոփոխութիւնը կապել Իվանենկոյի արած յայտնութեան օրուայ հետ. այժմ միայն ես զարմանում եմ, թէ ինչպէս ես այն ժամանակ

չնկատեցի, որ «Դեադէկա Ստեփանը» միւս զին-
ւորների հետ Իվանենկոյին չէր նախատում:
Այսպիսի դէպքերում առաջին ծաղրողն ու հայ-
հոյողը միշտ նա էր, իսկ այդ օրը նա մի ան-
կիւն քաշուած՝ սգաւորի տեսք էր ստացել: Եւ
այժմ միայն հարց եմ տալիս ինձ, թէ ի՞նչպէս
ես չզարմացայ Իվանենկոյի գնալու օրը, տեսնե-
լով «Դեադէկա Ստեփանին» պատշգամբում կանգ-
նած՝ լուռ, առանց նրան հայհոյելու: Ո՞վ զի-
տէ, գուցէ Իվանենկոյին ազգական էր, կամ
նրա խիստ պատիժը տեսնելով համոզուել էր,
որ զինւորական ծառայութեան հետ հանաք
անել չի կարելի. ինձ համար անբացատրելի էր
այդ: Բայց ես սկսեցի զարմանալ և լուրջ կաս-
կածել նրա փոփոխութեան մասին շնորհիւ մի
պատահական դէպքի:

Սուինը կաշուէ պատեանով զօտկիցս կա-
պած, օրապահութիւն էի անում Կորսունի հետ.
երկ-երկու ժամ քնում էինք և նոյնքան ժա-
մանակ էլ հսկում իւրաքանչիւրս: Անուշ քնի
մէջ էի, երբ Կորսունը իր քնկոտ, հաստ ձայ-
նով զարթեցրեց ինձ.

— Ակոպով, Ակոպով, ժամը 1-ը խփեց ար-
դէն, վեր կացե՛ք....

Ես, որ առանց հանուելու մեկնուել էի մահ-
ճակալիս վրայ, վեր թռայ, աչքերս տրորեցի և
նրան փոխարինեցի:

Շուրջս համատարած խռմփոց էր: Անցայ երկ-շարք ձգուած մահճակալների միջով, նայեցի աջ ու ձախ քնած ընկերներին, հրացաններն համարեցի և Կորսունին ուղարկեցի քնելու: Մի երկու անգամ անց ու դարձ անելուց յետոյ, վերցրի Լերմոնտովի „Герой нашего времени“ գրքոյկը և սկսեցի կարդալ իմ սիրած «Մաքսիմ Մաքսիմիչը»: Բայց մի քանի թերթ շրջելուց յետոյ տեսայ, որ աչքերս խփուում են, գիրքը փակեցի և վեր կացայ: Դուռը բաց արի—դուրս ելայ. սաստիկ ցուրտ էր, պարզ-կայ, անլուսին—մութ գիշեր: Աչքերս տրորեցի և մի երկու ըոպէ սառ օդի մէջ թարմանալուց յետոյ ուզում էի ներս մտնել, երբ յանկարծ մթութեան մէջ մի սպիտակ մարմին ստուերացաւ աչքիս առաջ. սկսեցի դիտել՝ տեսողութիւնս լարած. նա մօտենում էր ինձ: Զինուոր-ներից մէկն էր, որ շինելի մէջ փաթաթուած դուրս էր գնացել: Շինելը երկու ձեռքով մարմնին փաթաթած, սեղմել էր փորի վրայ, բայց կրծքին երևում էր սպիտակ շապիկը. մօտեցաւ, նայեց ինձ և լուռ անցաւ:

Այս սովորական բան էր, և ես ուշգրու-թիւն անգամ չդարձրի, թէ ով էր: Երբ դուռը բաց արի ներս մտնելու, զօրանոցի ծանր—տաք օդը երեսիս դիպաւ: «Ի՞նչ վատ օդ է», սկսել էի մտածել, երբ յանկարծ նկատեցի, որ դրսից եկած գինուրը շինելը վրայից վերցրած՝ պատ-

ըաստուում էր մտնել մազէ չոր ծածկոցի տակ: Դա «Դեադէկա Ստեփանն» էր:


Ես մօտեցայ ծխացող ճրագին և պատրոյգը ցած քաշեցի: Նստեցի ճրագի մօտ փայտեայ նստարանի վրայ, արմունկս դրի կեղտոտ սեղանին, գլուխս յենեցի ձեռքիս և մտածմունքների աշխարհն ընկայ, աչքս շարունակ ժամացոյցի վրայ պահելով: Քառասուն երեք ըռպէ էր անցել, երբ մի խշխշոց լսեցի. գլուխս բարձրացրի և նայեցի դէպի զօրանոցի խորքը.— մի զինուոր էր, որ կօշիկներն հագած՝ փաթաթւում էր շինելով, դուրս գնալու համար: Երբ մօտովս անցաւ, ես ճրագի աղօտ լոյսի ու թանձր, խեղդուկ օդի մէջ նկատեցի «Դեադէկա Ստեփանի» գունատ դէմքը:—Կրկին նա—, անցաւ մտքովս:

Նա վերադարձաւ, պառկեց: Անցաւ էլի կէս ժամ. մի քանի զինուոր էլի դուրս գնացին ու եկան նոյն ձևով: Մնում էր ճիշտ երեք քառորդ ժամ, որ ես զարթեցնէի Կորսունին ու ինքս հանգստանայի, երբ տեսայ, որ «Դեադէկա Ստեփանը» նորից փաթաթւում է շինելի մէջ: «Ների ի՛նչանդ է». մտածեցի ես: Նա վերադարձաւ և լուռ պառկեց: Ես վեր կացայ տեղիցս, սկսեցի զօրանոցի երկարութեամբ հրացանների շարանների առաջով անցուղարձ անել, շուտ-շուտ ժամացոյցի երկար սլաքին նա-

յելով: Անհամբերութեամբ սպասում էի, որ
այդ երկար սլաքը բարձրանայ, հասնի 12
թուանշանին, և այն ժամանակ 3-ը կը խփէր
ու ես կը զարթեցնէի Կորստունին: Աւելի արագ
քայլերով սկսեցի անց ու դարձ անել, և այս
անգամ հրացանների առջևից անցայ ու գնացի
մինչև զօրանոցի վերին պատը: Վերադարձին՝
աջ կողմս մի խուլ փրթփրթոց լսեցի—նման
ստորերկրեայ ջրի հոսանքի ձայնին. նայեցի—
«Դեղկա Ստեփանն» էր նստած, գլուխը ցած՝
դէպի աջ ծռած. անցայ նրա առաջով, երկար
չնայեցի: Երբ նորից վերադառնում էի, տեսայ
որ երկար սլաքը երկու ընկած միայն առաջ էր
գնացել և դեռ 28 ընկած մնում էր մինչև երե-
քը: Հէնց այնպէս, ժամանակս շուտ անցկա-
ցնելու համար, մօտեցայ «Դեղկա Ստեփանին»,
որ դեռ նստած էր և հարցրի.

— Ի՞նչ է, «Դեղկա Ստեփան», ինչո՞ւ չես
պառկում, հիւանդ հօ չե՞ս:

Նա շրթունքները շարժեց, նայեց ինձ, բե-
րանը ծռմուռեց, կարծես ուզում էր մի բան ա-
սել, բայց աչքերը շուռ տուեց և լուռ նայեց
ճրագին: Նրա գունատ դէմքը սաստիկ աղօթ
լոյսի տակ չզիտեմ ինչո՞ւ իմ մէջ զարթեցրեց
Իվանենկոյի՝ կարմրութիւնը կորցրած, մանր
դիմագծերի պատկերը: Այս յիշողութիւնը, որ
մանալի էր նրանով մանաւանդ, որ մի



նմանութիւն չկար այս երկու անձերի ոչ արտաքինի և ոչ բնաւորութեան մէջ:

— Փորդ հօ չի՞ ցաւում, «Դեադէա Ստեփան» — նորից հարցրի ես: Իսկ նա նայեց ինձ, յետոյ ճրագին և ապա աչքերն ուղղելով զէպի առաստաղ՝ կուրծքը ուռեցրեց ու մի խոր հառաչ արձակեց:

— Վաղը գնա բժշկի մօտ, «Դեադէա Ստեփան», ինչպէս երևում է հիւանդ ես —, նորից պնդեցի ես:

Նա թեք ընկաւ կոշտ՝ խոտով լցուած բարձի վրայ և նորից յոգոց հանելով ասաց, կարծես սիրտ առնելով իմ մեղմ և բարեկամական խօսակցութիւնից.

— Ո՛չ, պարոն Ակոպով, հիւանդ չեմ, ոչ էլ փորս է ցաւում. միայն գիշերը սարսափելի երկար է, մարդու բուն չի տանում. էլի ափսոս չէ՞ ամառը. դեռ կունքդ չառած՝ մէկ էլ տեսար արևի ճառագայթը պատուհանից սկսեց աչքերդ ծակծկել»: Առաջին անգամն էր, որ նա ինձ հետ խօսելիս «պարոն» էր ասում — ես զարմացայ: Գիշերուայ երկարութիւնից էր գանգատւում քնկոտ «Դեադէա Ստեփանը», — այդ աւելի զարմանալի էր, բայց ինձ տարօրինակ չթուաց, որովհետեւ ես էլ անհամբեր ընդհանրեմ էի համարում, թէ քնի սաստիկ կարօտ էի: Ուզում էի հեռանալ, երբ նա ուղիղ նստելով հարցրեց՝ իրեն անսովոր խղճալի ձայնով:

—Դուք կարգացած մարդ էք, աշխարհի բոլոր գաղտնիքները գիտէք, պարոն Ակոպով—դժոխքում մեղաւոր հոգիները քննւմ են, թէ գիշեր-ցերեկ կրակի բոցերի մէջ տանջւում են արթուն»։ Նա ապշեցի. չգիտէի ինչ պատասխանեմ, երբ նա խօսքը փոխեց.

—Ասում են, որ կարգապահական բատալիոնը զժոխքից էլ վատթար է, ճիշտ է։ Այնտեղ, ասում են, զինւորների հոգին հանում, առաւօտից մինչև երեկոյ հրացաններով վագեցնում են։

—Ճիշտ է, ասացի։

—Բայց գիշերները նրանք հանգիստ կը քնեն չէ՞—, հարցրեց նա միամիտ եղանակով։

—Ի հարկէ—, պատասխանեցի ես—, յոգնած մարդիկ են, պառկեն թէ չէ, քնները կը տանի։

Այստեղ «Դեմոկրատները» նորից հառաչեց։ Մտածմունքի մէջ ընկանք՝ ես էլ նա էլ, և մի րոպէ մեր մտածկոտ հայեացքները հանդիպեցին միմեանց, սակայն նա աչքերը թարթեց և երեսը շուռ տուեց. ապա ասաց դառնազին ձայնով.

—Խեղճ Իվանենկօ, հիմա ի՞նչքան կը տանջուի։ Գիտէք, նա շատ լաւ տղայ էր, մեղանից ոչ ոք նրան չէր ճանաչում և իզուր տեղը ծաղրում էինք. դրա համար նա՞ էլ ոչոքի հետ չէր խօսում. նա շարունակ գանգատուում էր, որ ինքը աղքատ է, հարբեցողի տղայ, դրա համար բոլորն արհամարհում են իրեն։ «Մեր գիւղում»

էլ—ասում էր նա—ծաղրում էին ինձ և «շանսատակ եղած» հարբեցողի որդի էին անուանում։ Մայրս, ասում էր, ամեն օր աղօթք էր անում Աստծուն, որ իր հոգին առնի և ինքը չար գիւղացիների ձեռից ազատուի. գիւղի տղերքը միշտ ծեծում էին ինձ։ Երբ զինւոր ընկայ, շատ ուրախացայ, որ ազատուեցի այդ անիծածների ձեռքից։ Բայց այստեղ էլ—ասում էր նա—չկարողացայ ազատուել. և այդ իմ մեղքից է. ես համ աղքատ եմ, համ դգում, այդպէս էլ հողը կը մտնեմ»։ Դրա համար էլ նա բոլորից վախում և քաշւում էր։ Քանի՞ անգամ ես նրան իզուր տեղը հայհոյել եմ և նոյնիսկ բռնեցրով խփել եմ, իսկ նա ոչինչ չէ ասել...։ Խեղճ, խեղճ Իվանենկօ։ Բայց նա այժմ հանգիստ քնած կըլինի, չէ՞։ Տեսեսնա քնած ժամանակ ի՞նչ երազ է տեսնում։ Գիտէ՞ք, պարոն Ակոպով, ես երէկ գիշեր երազիս դժոխքը տեսայ—սատանաներով լի. ի՞նչպէս էին ծլծւում, ճշւում, գոռում, հայհոյում. սրբան տաք էր այնտեղ։ Գիտէ՞ք, մարդկանց այնտեղ սղոցում էին, աչքերը հանում...։ Նա խաչակնքեց.— Ճիշտ այնպէս էր, ինչպէս պատմում էր մեր գիւղի քահանայ Պրակոպին։ Գիտէ՞ք, նա շատ խելօք, գիտնական մարդ է. գրի սկսեց սպիտակը ճանաչում է, մեր մոլժիկների նման յիմար չէ. Աւետարան, Աստուածաշունչ, Վարք սրբոց՝ բոլորը կարդացել է. սատանաներից էլ

չի վախում. մի գիշեր հարևան գիւղից դառնալիս, մենակ՝ գերեզմանի կողքով անցել էր առանց վախենալու: Նա պատմում էր, որ մի գիշեր ինքը «տեսիլք էր գնացել» — ինքը տանը քնած՝ իր հոգին գնացել էր միւս աշխարհը շրջելու. նա գոխքի հետ էլ ծանօթ է, արքայութեան հետ էլ: Երէկ գիշեր ես գոխքը տեսայ ճիշտ այնպէս, ինչպէս տեսել էր հայր Պրակոպին....:

— Դ՛ընգ, գ՛ընգ, դը՛նգ... խփեց ուղիղ երեք անգամ ժամացոյցը և ես նայելով մեծ սլաքին, ասացի.

— Քնիր, «Դեադկա Ստեփան», ես էլ պիտի քնեմ...: Եւ վեր ելայ:

— Պարոն Ակոպով. դուք ճրքան լաւ մարդ էք. այդ ուսումի շնորհիւ է, չէ՞. երանի ձեզ, որ ուսում էք առել. ամեն բան գիտէք և բոլորն էլ ձեզ յարգում ու քաղաքավարի, մարդավարի են վարւում ձեզ հետ: Մինչև անգամ կապիտանը ձեզ հետ «Դուք» — ով է խօսում: Յիշում էք, ինչպէս կապիտանը ձեզ դուրս բերեց շարքերից և չարչարանքից ազատեց. ես այն ժամանակ հասկացայ, որ նա համոզուած է, թէ դուք գողութիւն չէք անիլ և շատ, շատ նախանձեցի ձեզ. բոլորի վրայ կասկածում էր, բացի ձեզանից...:

— Եւ ձեր ծառայութիւնն էլ քիչ է — տարի ու կէս՝ աչքդ խփիր, դեռ չբացած՝ տարին գլոր-

ւեց: Երեք տարի ինձնից յետոյ էք եկել, ես դեռ այստեղ պիտի փթեմ, իսկ դուք արդէն տանն էք: Էհ, եղբայր, անուսում մարդու կեանքը կեանք չէ...:

Հեռացայ: Կորսուներն զարթեցրի և շտապով տեղս մտայ:

Ինչի՞ համար էր այդ խօսակցութիւնը, ինչո՞ւ «Դեադկա Ստեփանը» չէր բնում, ինչո՞ւ յիշեց Իվանենկոյին ու դժոխքը... Ժամանակ չունեցայ այդ մասին մտածելու, և երբ աչքերս բաց արի՝ տեսայ, աղօթարանը սպիտակին է տալիս պատուհանից, և մօտս կանգնած է քնաթաթախ, ուռած աչքերով, պսպղուն դէմքով Կորսունը. ժամը 5-ն էր արդէն: Նորից սուինը կապեցի և սկսեցի զարթեցնել զինւորներին: Երբ մօտեցայ «Դեադկա Ստեփանին», տեսայ՝ աչքերը կարմրած. խոր քնի մէջ:

Նրան էլ զարթեցրի:

— Հին ծուլութիւնդ կրկին մտաբերեցի՞ր, անպէտք, հազիւ ուղղուել էիր—, գոռաց բարձր ձայնով Փելզֆերելը, մատները խփելով երկար սուսերի կոթին:

«Դեադկա Ստեփանը» շարքից դուրս եկած, հրացանը ձեռին, անխօս կանգնած էր նրա առաջ, գլուխը կախ գցած:

— Ոչխար է դառել, խօսելն էլ մոռացել է... պառան, կորի՛ր աչքիցս, լճեր: «Դեադկա Ստե-

փանը» հրացանը տեղը դրեց և լուսնոտի քայլերով գնաց, բերանքսիվէր փռուեց մահճակալի վրայ:

Այս անգամ նա չէր կեղծում. լուրջ հիւանդ էր: Մի քանի անգամ բժշկի մօտ գնալ-գալուց յետոյ, մի օր վկայականը ձեռին ներկայացաւ Փելդֆերելին և իրաւունք ստացաւ իրերը կարգի գցել ու հիւանդանոց գնալ: Ոչ ոքի հետ չխօսեց հիւանդանոց գնալիս: Հրացանը պարագաներով յանձնեց հերթապահ զինւորին, կոճկեց շինելը, գօտին անփութութեամբ կապեց, գլխարկը կոխեց գլուխը, ձեռքերը դրեց շինելի գրպանը և, առանց մեզ նայելու, դուրս եկաւ զօրանոցից:

Բոլորս մոռացանք «Ստեփան Դեադկային»: Միայն երբեմն-երբեմն առողջացած զինւորները հիւանդանոցից զօրանոց գալիս պատմում էին, որ «Ստեփան Դեադկան» բոլորովին փոխուել, նիհարել, ոսկոր է կտրել: «Փելդշերներն ասում են, որ նա երկար չի ապրի, բայց չեն էլ հասկանում, թէ ինչ հիւանդութիւն ունի»:

—Էհ, եղբայր, ես ճանաչում եմ նրան—, ասաց մի օր Մարչենկօն—, սուտ հիւանդ է ձեւանում. ո՞վ գիտէ, քացախ է խմել, կամ թուր-թունի ջուր է անուշ արել, որ մեզ նման հրացանը վերցրած փողոցները չըջափչփի. շատ է ծառայել մարդը—հեգնեց նա—, յոգնել է, ու՛զում է մի քիչ հանգստանալ:

Ես կարծես զգում էի, որ Մարչենկոն սխալ-
ւում էր, «հոգուն մեղք էր անում», բայց ոչինչ
չասացի:

Նրա մասին խօսք լինելիս՝ զինւորները—
մանաւանդ երդումն արդէն ընդունած նոր զին-
ւորները, սաստիկ հայհոյում էին նրան: Եւ ոչ
ոք չէր փորձում պաշտպանել: Այժմ միայն ես
ցաւում եմ, որ նրա մասին ոչ մի լաւ խօսք,
պաշտպանելու ոչ մի փորձ չեմ արել: Եւ այդ
ցաւն զգում եմ այն օրից, երբ վերջին անգամ
տեսայ նրան այն զրութեան մէջ, հիւանդա-
նոցից զօրանոց դառնալուց յետոյ...:





V

նցաւ մեծ պասից ամբողջ վեց
շաբաթ, և մենք վերջապէս
ազատուելու էինք ձկան
շորուայ ուտելուց:

Անհետացան մեծ պասի
հետ և գորշ երկնքի մութ
կնճիռները: Մանուկ ճա-
ռագայթները շէկ ասեղների պէս ոստոստելով
ցցուեցին սպիտակ սաւանի վրայ: Ձեան հա-
տիկները չգիմացան նրանց չարաճճի խրտղը-
տումներին: Նրանք ծիծաղից թուլանում էին
ու պսպղուն աչքերը փակելով անհետանում:
Երկիրը հետզհետէ բաց էր անում իր խոնաւ,
սև կուրծքը: Նոր ծիւերը գաղտագողի, անշշուկ՝
լեզուները դուրս էին հանում հողի տակից և
զարմանքով պնշ-պնշ նայում արեւին: Պըղ-
տոր առուները խոխոջելով անցնում էին փողոց-
ներիով: Գարննն էր գալիս արշաւակի, և զար-
նան հետ մեր օրերը գլորւում էին հապճեպով:

Դանդաղաշարժ մեծ պասի ու թմրած
ձմեռուայ հրաժեշտը մեր սրտերից ջնջեց միօ-

ըինակ տաղտուկը և երեսներիցս անհետացրեց երկնքից էլ գորշ՝ թախիժը:

Մի ամբողջ շաբաթ մենք պատրաստութիւն էինք տեսնում Զատիկին դիմաւորելու: Անկողինները դուրս գցեցինք, ներքնակների և բարձերի յարդերն ու խոտերը փոխեցինք, գորանոցի յատակն ու պատուհանները լուացինք և, երկու մեծ խմբերի բաժանուած՝ սկսեցինք եկեղեցի յաճախել: Հրէաներն էին այդ շաբաթ բոլոր հերթական ծառայութիւններն անում: Ռուսներն ու վրացիները գնում էին ոռոսաց եկեղեցին, իսկ հայերն ու լեհացիք՝ հայոց: Զինւորական-կարգապահական խստութիւններն էլ այդ շաբաթ թուլացել էին. և մենք հանգիստ սրտով, ուրախ հոգով պատրաստուում էինք դիմաւորելու Զատիկին:

Այդպիսի մեծ տօներին հիւանդանոցում եղած այն զինւորները, որոնք համարեա առողջացած են, կամ որոնց հիւանդութիւնը թեթեւ է, բժշկից իրաւունք են ստանում և գալիս են գորանոց՝ միւսների հետ խոստովանելու, հաղորդուելու և թաթախուելու:

Ներքնակները նոր յարդով լցրած փռել էինք արևը, և մենք պատի տակ շարուած տաքանում էինք ու զրուցում, երբ յանկարծ Կաբաչենկօն գոռաց.

— Ստեփան Դեադկան, Դեադկա Ստեփանը, տղերք... դժոխքի շուն է դարձել, նայեցէք:

—Ձատկի օղին միտն է գցել խողը—սրա-
խօսեց Վասիլիկը:

—Ի՞նչ ես հայհոյում, էշակ, ամօթ չէ՞,
սուրբ շաբաթ է, դեռ եկեղեցի էլ է գնում,
պատրաստւում է հաղորդուելու—բարկացած
նախատեց Շակաշուկին, ցից ատամների ա-
րանքներից թուքը ցայտեցնելով: Բոլորն ընդ-
հատեցին հռհռօցը և լուրջ դէմք ընդունեցին:

Ես նայեցի ու առաջս տեսայ մի կատա-
րեալ կմաղք. աչքերը փոս էին ընկել. տափակ
քիթը, որ առաջ հազիւ նկատւում էր, բար-
ձրացել և ցցուել էր հողակոշտի նման, որի
կողքերից անձրևաշուրը քերել է հողը. կնճիռ-
ները շատացել էին և ակօսները խորացել, իսկ
ցանցառ մազերը թրջուած լաթի պէս կախ
էին ընկել: Իրօք ծիծաղելի էր «Իեազկա Ստե-
փանը», բայց աւելի՛ արգահատելի:

Սակայն նա ոտքերը դնում էր գետնին
շատ հաստատ, բայլերը անում էր մեծ-մեծ
և արագ: Երկու դուրս ընկած այտոսկրների
արանքում փոսացող շրթունքների վրայ ժպիտն
յիշեցնող մի բան էր երևում, դեղին ժայռի մի
ծակոտիում բսած գունատ վարդի նման: Իսկ
խոր ընկած աչքերում մի բան էր փայլում, որ
յիշեցնում էր թանձր ամպերի մի պատահա-
կան ճեղքուածքից դուրս սպրդած արևի դող-
դոջուն ճառագայթը:

Նա լուռ մտաւ զօրանոց: Միւսների հետ եկեղեցի էր յաճախում:

Շաբաթ երեկոյեան հայերս եկեղեցու բակում մեզ համար պատրաստուած ընթրիքով թաթախուեցինք և վերադարձանք զօրանոց: Ժամը 12-ին ոռւս զինւորները հագնուեցին և ֆելդֆերելի առաջնորդութեամբ ուղևորուեցին եկեղեցի: «Ստեփան Դեադկան» վերջին շարքերում կորագլուխ հետևում էր նրանց:

Հետևեալ օրը, առաւօտեան նրանք վերադարձան հաղորդուած, և մենք պատրաստուեցինք ընդհանուր թաթախում անել զօրանոցում:

Մաքուր հագնուած, կօշիկներս սրբած, փայլուն—մոմած գօտիներով, երկ-գլուխ արծուի մեծ կակարդները գլխարկներէս կպցրած՝ մենք շարուեցինք երկու շարքով զօրանոցում: Փեղֆերելը իրանը ուղիղ պահած, ձեռքերը հանդարտ շփելով միմեանց, անց ու դարձ էր անում մեր առաջով, սրան կամ նրան ժպտաղէմ թեթև նկատողութիւն անելով: Յաճախ տիճան սպաններն արդէն հաւաքուել էին. սպասում էինք կապիտանին: Զինւորները միմեանց հետ փսփսում էին, աչքի տակով նայելով պատի տակ դրուած մեծ սեղանին, որի վրայ հպարտօրէն բարձրանում էին չորս հատ մեծ, կապտագոյն շէր՝ լի օղիով: Շէրի կողքին—

սեղանի վրայ, աղիւսի կտորների նման, բլրա-
 ձև դարսուած էին միմեանց վրայ պասէքի դե-
 ղին կտորները: Կողքի փոքր սեղանին դրուած
 էր խաշած ձուերով լի մեծ կոնքը, որի առաջ
 դարսուած էին մի-մի կտոր լաւաշի մէջ փա-
 թաթուած ապուխտի բարակ շերտերը: Եւ այդ
 բոլորը փայփայում էր մեր տեսողութիւնը,
 գոհունակութեան ժպիտ խաղացնելով դէմքե-
 րիս վրայ: Մենք՝ աշխատելով ծածկել հըր-
 ձուանքներս, աչքի տակով նայում էինք այդ
 իսկական Զատիկին, որ առօք-փառօք բազմել
 էր զօրանոցի մէջ մեր դիմացը, և բերաններիս
 ջուրը գնում էր:

Փելզֆերելը վազեց դէպի դուռը. սպաներն
 շտապով շարուեցին մեր աջակողմը, և բոլորից
 աջ կանգնած պարուշիկ Իվանովը ձեռքը ճա-
 կատին տանելով գոռաց.

— Смирно...

Դուռը բացուեց և կապիտանը ներս մտաւ,
 շողշողուն-ոսկեթել ուսադիրներով (эполетъ):
 Փելզֆերելի զեկուցումն ընդունելուց յետոյ,
 նա չափածոյ քայլերով առաջ եկաւ և, ձեռքը
 ճակատին դնելով, ուրախ ու հանդիսաւոր ձայ-
 նով ասաց.

— Здорово бра́тцы!...

— Здравія желаемъ, Ва́ш-со́к-ро́д!..., [Թըր-
 թուռն ձայնով, մի մարդու նման պատասխա-
 նեցինք մենք:

— Շնորհաւորում եմ ձեր սուրբ Զատիկը, քաջեր...

— Սոնարհաբար շնորհակալ ենք, Ձերդ բարձր բարեծննդութիւն — աղաղակեցինք մենք նորից:

Նա ձեռքը ճակատից վերցրեց, դրեց կողքից կախ ընկած երկար սուսերի կոթին, նայեց սպաներին, ապա մեզ և ասաց.

— Այսօր ես բախտ ունիմ ձեզ շնորհաւորել և միևնոյն ժամանակ իմ գոհունակութիւնն յայտնել ձեր անբիծ և սրտագին ծառայութեան համար: Թէև տարուայ ընթացքում եղել են դէպքեր, որոնք ինձ սաստիկ վրդովել են, ինչպէս գող Իվանենկոյի խայտառակ յանցանքը, բայց ես միխիթարուած եմ նրանով, որ նման դէպքեր այլևս տեղի չեն ունեցել, և յոյս ունիմ, որ այսուհետև էլ չեն կրկնուելու: Ես համոզուած եմ, որ դուք կը շարունակէք ձեր անկեղծ ծառայութիւնը ի փառս հայրենիքի և մեր սիրելի Թագաւորի... ուռն...

— Ուռն, ուռն..., բարձրանում ու իջնում էին մեր կրծքերը, հիմն ի վեր թնդագնելով զօրանոցը:

Ուժգին արձագանքի վերջին ալիքները խլածայն ոլորումներով նոր էին նիրհել մեր ականջներում: Ամբողջ զօրանոցը՝ մի բանի հարիւր շնչաւորներով, անձայն նկուղի տեսք ստացաւ: Եւ բոլորս՝ գլուխնիս թեքած դէպի սեղանը, աւանջ էինք դնում մեծ շշից բաժակի

մէջ ոստոստող օղիի ուրախ քըլթըքըլթոցին:

Կապիտանը ձեռքը սուսերի կոթին դրած, պատրաստուում էր ֆելդֆեբելի ձեռքից իրեն մատուցող օղիի բաժակն ընդունել: Յանկարծ նա՝ բերանը կիսաբաց, հետաքրքիր հայեացքով նայեց դէպի վերջին շարքերը: Հանդարտ ծփացող ալիքների նման՝ մի շշուկ անցաւ մեր շարքերով: Նայեցինք այն կողմը, և բոլորս ապշեցինք:

Ուրրաձև մի կեղտոտ թուղթ դողացող ձախ մատների մէջ սեղմած, շարքերի առաջով անցաւ կմաղքանման «Դեադկա Ստեփանը», կըրունկները անհամաչափ տըխկտխկոցով յատակին խփելով, և արագ քայլերով մօտեցաւ կապիտանին: Կապիտանը ինձնից դէպի աջ հինգ քայլ հեռաւորութեան վրայ էր, և ես տեսայ թէ ինչպէս այլագունուած «Ստեփան Դեադկան» կուրծքը դուրս ձգելով ցցուեց նրա առաջ, աջ ձեռքը դրեց ճակատին, սկզբում դողացող՝ բայց յետոյ հաստատուն ձայնով ու բարձր ասաց.

— Ձերդ բարձր բարեծննդութիւն, մի շատ կարևոր խնդիր ունիմ:

Կապիտանի թերթերունքները արագութեամբ հեռացան միմեանցից, աչքերի գնդակները դուրս թռչելու չափ բարձրացան, բիբերը փայլեցին արևի ճառագայթն յանկարծ վրան ընկած սաթի նման. նա հայեացքը մեզ ուղեց վայրկենապէս, և ապա կարծես զարմանքը

զսպելով, աչքերը նորից սևեռեց նրա վրայ ու հեգնական եղանակով հարցրեց.

— Նո՛ւ... ի՞նչ կը հրամայես, «Դեմդեկա Ստեփան»։ Ու հեգնական շեշտը «Դեմդեկա» բառի վրայ էր։

Այդ ժամանակ «Ստեփան Դեմդեկայի»՝ օղի մէջ կամար կապած արմունկը դադարեց դողալուց, նրա երեսին մի թեթև կարմրութիւն եկաւ, նա թուրք կուլ տուեց, ծնկներն ամուր սեղմեց միմեանց և՛ բարկութիւն արտայայտող, բռնազբօսիկ ու զինուորին անմայել յանդուգն ձայնով որոտաց.

— Ձերդ բարձր բարեծննդութիւն! մեծ, շատ մեծ, մահացու մեղք եմ գործել։ Իմ հոգին դժոխքի արժանի է... Խիղճս ինձ հանգիստ չէ տալիս. մեղքի մէջ եմ գցել Ձեզ էլ, ընկերներիս էլ... Սկարեազի փողերից՝ Իվանենկօն՝ տեղեկութիւն չունի, ես եմ գնացել վերցրել, կեղծ ստորագրութիւնը ես եմ տուել...։

— Ի՞նչ... ի՞նչ, ի՞նչ... պէ... էս... , հազիւ կարողացաւ արտասանել զարհուրած կապիտանը, ծովում սուզւող կիսախեղդ մարդու սրտակտուր ձայնով։

Մենք գլուխներս անկեցինք, իրաններս դէպի առաջ ծռեցինք և, կուրծքներս կարծես մի աներևոյթ գերանի դէմ տուած, աչքերնիս չռեցինք «Դեմդեկա Ստեփանի» շրթունքներին։

Նա հազեց և, կարծես մի անհազին բռն ու-

սերից վայր գլորելով, շնչեց ուժգնութեամբ։ Ապա սկսեց կանոնաւոր ու հաստատուն բա-
ռերով խօսել, ինչպէս խօսում էր ֆելդֆերերը՝
գեկուցում տալիս։

—Ձերդ բարձր բարեծննդութիւն, ամբողջ
երկու ամիս չարչարւում էի, որպէսզի կարո-
ղանամ ձեռքս Սկարեադի ձեռքին նմանեցնել։
Փողերի մի մասը տարայ խմեցի, իսկ 18 ըուբ-
լին պահեցի, որ կնոջս ուղարկեմ, բայց չկա-
րողացայ ուղարկել։ Իվանենկոյի աքսորից յե-
տոյ ձեռքս չբռնեց այդ բանն անել։ Ե՛ս եմ
գողացել, Աստուած է վկայ, ես եմ գողացել,
տէրտէրին էլ խոստովանեցի, նրա մօտ էլ եր-
գուեցի, որ ես եմ գողացել։ Ահա այն թղթերի
մի մասը—ինչ որ կարողացել եմ գտնել—, որի
վրայ ես սովորում էի ձեռքս նմանեցնել Սկա-
րեադի ձեռքին։ Իվանենկոյի տետրակի մէջ իմ
թղթերից է սխալմամբ ընկել, նա չէր կարող
այդ ձևով գրել։ Իվանենկոն գիտէր, որ ես եմ
գողացել, իր խոստովանութիւնից դեռ մի օր
առաջ պատահմամբ իմացաւ և յորդորում էր
ինձ՝ տանել փողերը Սկարեադին տալ։ Բայց ես
չլսեցի նրան։ Իր խոստովանութիւնից յետոյ
նա ինձ ծածուկ ասաց, որ ոչ ոքի չյայտնեմ
եղելութիւնը,—Որովհետեւ, ասում է, դու մեղք
ես, սկզբից չես խոստովանել, պատիժդ շատ
մեծ կըլինի, տաժանակիր աշխատանքի կուղար-
կեն, կին ունիս, երեխաներ ունիս—մեղք են։

Բայց երդուիր, որ այլևս այդպիսի բան չես անիլ»։ Նա երդուեցի։

— Ինձ պատժեցէք, ես յանցաւոր եմ, ազատեցէք Իվանենկոյին։ Նա մեծ բան արաւ, զօրքի անունը փրկեց արատաւորութիւնից և ուրիշի յանցանքն իր վրայ առաւ, տեսնելով ընկերների զուր տանջանքը, ու վախենալով, որ յետոյ կը բացուի, և ինձ սաստիկ կը պատժեն։ Նա եմ արել, Աստուած է վկայ, ես եմ ան...ան...րել...»։

Այստեղ նրա ձայնը խզուեց, և նա խզուած ձայնով ասաց, ձախ ձեռքը մեկնելով կապիտանին.

— Ահա փողերը, որ լրացրել եմ կօշիկներս և սպիտակեղէնս ծախելով...։

Կապիտանի ստորին արտևանունքին մի փոքրիկ, մարգարտանման բան փայլեց կարծես։ Նա հազեց և, ձեռքը դէպի վեր տանելով իբր գլխարկն ուղղելու, բթամատն աննկատելի կերպով դիպցրեց արտևանունքին և անհետացրեց այդտեղի համար անսովոր գնդակը...։

Նա չկարողացայ իմանալ, թէ ինչ պատահեց ինձ. միայն բքերիս վրայ լճացած հեղուկի միջով տեսայ առաջս կանգնած մի արհամարհուած կմաղք, որին ուզում էի փաթաթւել ու պինդ համբուրել։ Յիշեցի իմ հերթապահութեան գիշերը, «Դեադկա Ստեփանի» խօսակցութիւնը և զգացի ան, ինչ որ կզգար

մի մեծատուն տիկին՝ առաւօտեան տեսնելով շէմքի մօտ փռուած սովամահ աղքատի դիակը, որին երեկոյեան մերժել էր 5 կոպէկ տալու, կարծելով թէ օղիի համար է ուզում...:

Խնչպէս խմեցինք կենացները, ինչպէս շրջուեցինք դէպի աջ և, զոյգ-զոյգ մօտենալով սեղանին, ստացանք պասէքն ու ձուն. ինչպէս մեր գնդապետն այցելեց մեզ և 25 ըուբլի ընծայեց տօնի առթիւ... ոչինչ, ոչինչ չեմ յիշում: Մտքիս առաջ մնացել է միայն այն ոսկրացած մարմնի պատկերը, որ տատանուեց, և որին վայր ընկնելուց պահեց ֆելդֆեբելը ձեռքերը մխելով նրա կոնատակերին ու, կապիտանի ձեռքի նշանի համաձայն, տարաւ նրան գրասենեակը...:

— Խեղճ Իվանենկօ, իսկ մենք նրան թքողող արինք—, ասում էին զինւորներն զգածլած:



Զիմացայ այնուհետև թէ ինչ պատահեց, որովհետև մի քանի օրից յետոյ ես հրաժեշտ տուի զօրանոցին և գնացի քննութիւն տալու: Արդեօք նրան աքսորեցին, արդեօք Իվանենկօն վերադարձա՞ւ, կամ ինչպէս ընդունեցին նրան զօրանոցում: Միայն մի ժամանակ անցնելուց յետոյ, լսեցի որ Իվանենկօն կապիտանի մօտ պատրաստուում էր սպայութեան քննութիւն

տալու: Եւ էլ ոչ ոք չէր կարծում թէ նա «դը-
դում» է:


«Դեադկա Ստեփանի» մասին էլ ասա-
ցին, որ նա կարգապահական բաժանմուն-
քում դիմանում է բոլոր տանջանքներին,
առողջացել ու լցուել է: Ամեն առաւօտ, ա-
սում են, ընկերներին պատահելիս ժպտալէմ
«Բարի լոյս» է տալիս և ձեռքերը միմեանց
շփելով մխիթարում է այդ տխրալէմ տան-
ջուածներին: Շատ անգամ, երբ արսուրականները
երկար չարչարանքից յետոյ, ոտները փռած
շարւում են զօրանոցի պատի տակ իրենց դժ-
բախտ օրը լալու, յանկարծ, պատմում են, ե-
րևում է «Դեադկա Ստեփանը», մէջքը յենում
է պատին, ոտները տարածում է գետնին և,
թեթև խփելով ուռած ու կարմրած ոտներին,
ասում է.

— Այդպէս, դիմացէք մինչև փերջ. — ապա
դառնում է ընկերներին և աւելացնում՝

— Էհ, եղբայր, զարդ մի անէք, այս ծանր
օրերը կանցնին. սրանից վատթար օրեր եմ
տեսել: Մենք տանջւում ենք ցերեկը, իսկ ցե-
րեկուայ տանջանքից յետոյ՝ հրքան բաղցը է
գիշերուայ երկար ու հանգիստ քունը: Ցերեկ-
ուայ տանջանքը անքուն գիշերների տանջանքի
հետ անկարելի է համեմատել, անկարելի...:

Ծ Ի Ա Ծ Ա Ն Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԻԻ. ԲԵԶՐՈՂՆԱՅԱ. Անձնուէր բարեկամ. Թարգմ. 7. 5 Կ.
2. ՄԱՐԳԱՐ. Գողը (Զինուորի յիշատակարանից) 20 Կ.



Դիմել՝ Թիֆլիսի և Բազուլի գրավաճառներին:

Պանսար՝ Բազուլ Малая Морская. 2-я Русско-Армянская школа. Գարրիել Պապեանի մօտ:

Photograph
1992

